5. Էջ 223 ի լուս. Ի զրոց ժամի Չամոսցեայ չէն քաղաք: Հոգաբարձու անարժան Սիմէօնի ԾԵ(Բ)ունոյն Սղէգքէվեանց 1720: Հմտ. Macler: REA 7 (1927), 154—155:

17.

Ժ Ո Ղ Ո Վ Ա Յ Ո Յ

Cod. arm. 47. — ԺԴ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 271: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21, 7X14, 5 եւ: — ՆԻԻԹ՝ բարձր: — ԳԻՐ՝ նոտր-շղագիր: — ԳՐՁՈՒԹԻՒՆ՝ միասին: — ԿԱԶՄ՝ հիմ, լաթակազմ. ապա նորոգուած հաստ խաւաքառով: — ՀԱՆԳԱՄԱՆԿ՝ ընդհանրապէս լաւ. տեղ տեղ վնասուած խոնարհութեւ: — ԶԱՐԴԱԳԻՐ ԵՒՆ՝ չուրի: — ՏԵՂԻ՝ բուրի կաթա: — ԳՐԻԶ՝ կարապետ. կ'երեւայ քէ ուրիշ գրիչ մ'ալ մասնակցած է օրինակութեամբ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԴ. դար:

Մատենա է՝ Ժողովածոյ այլ եւ այլ բարոյական, խրատական եւ իմաստասիրական իրաց. ուր կան.

1. Էջ 1—21. (Հարցումն Յորնաղի) եւ պատասխանի Մովսէսի Հայոց (քե)րթողի եւ Դաւթի փելիստփայի: Հարցումն. Էակը երկու Ե(ն) ի բնութեանցն Բրիտոսի, Եթէ անեակը: Պիս. Էակը եւ (ո)չ անէ(ակը): ...

2. Էջ 21—25. Հարցումն ընդդիմադարձութեան: Աստուածածին կոյսն մայր արարչին անհա՞յր որդւոյն ծնաւդ է, թէ անմայր որդւոյն ծնիչ...: Սկիզբէն թուղթեր ինկած են:

3. Էջ 26—32. (Քարոզ ի բանն՝) Հայր մեր որ յերկինսդ ես...: Գրեալ է ի գիրս թագաւորութեանցն, թէ յորժամ Յովնաթան որդին Սաւուղայ պատերազմէր...:

4. Էջ 33—43. (Քարոզ ի բանն՝) Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեղ: Առաջին զի ներարամադրական բանս մեր ծնանելով ի մտաց...:

5. Էջ 43. Անուանք մարգարէիցն այս են. Աղամ, Նոյ...:

6. Էջ 44. Ձի՞նչ են հաւատք, իմանալի՞ թէ զգալի...:

7. Էջ 45. Տեսութիւն. Ձի՞նչ է որ յամենայն աւր պատարագ առնեն. ոչ թէ կենդանեաց միայն, այլ եւ մեռելոց լինի փրկութիւն...:

8. Էջ 50. Յաղագս թէ զի՞նչ աւրինակ է հացին եւ գինոյն. յորս թէ նուազի շնորհն վասն անարժան քահանային: Յորժամ էջ Բանն Աստուած յարգանդ կուսին...:

9. Էջ 53—56. (Հանգանակ հաւատոյ). Ոոստովանիմ եւ հաւատամ անեղ եւ անսկիզբն, անվախձան եւ անկատարած...:

10. Էջ 57—79. Պատճառ վասն ստեղծման մարդոյ: Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր...: Աստուած ընկալ Դաւիթ աստուածաշարժ լեզուան խաւսի ընդ Աստուած...:

11. Էջ 79—83. (Քարոզ ի բանն՝) Ոչ երկվար առանց սանձուց եւ ոչ հարստութիւն առանց իմաստութեան զգուշութեամբ պահեն զստացաւղն...: Ի կատարածին՝ օրհնութիւններ. կ'աւարտի. «Ձէոյակապ եւ զհոգեկաւոր քաղաքս զաստուածապահ Կաֆայս վերստին շինեսցէ եւ զաստուածաբնակ վանորայս եւ զմենաստանս զաւրացուցէ յերկիւղ բարի եւ ի գործ պատուիրանաց իւրոց...»:

12. Էջ 83—87. Պատճառ վասն Դաւթեա Ա. Սաղմոսին: Երանեալ է այր...: Չամենաուտ պարզեացն Աստուծոյ մինչեւ ցլետին արարածս անցանէ հաստատեալ ի բնութիւնս ծառոց...: Այսպէս զաստուածաբերց տունկս եւ զպտղեղս հանդերձեալ է տնկել ի բնական երկրի մերում հողերնկալ եւ ժիր մշակն այսմ զբախտի մեծն Եպիփանէս...: Եւ է աւրինակ արմատարկութեանս ի մեղ այսպէս (էջ 84). Աղեքսանդր Մակեդոնացի որդի Փիլիպպոսի թագաւորեալ ամս երկուսասան...: (Կը պատմուի սուրբ Գրոց յԵօթանանից թարգմանութիւնն ըստ Եպիփանի. որ կ'աւարտի այսպէս). աւանդեաց զթարգմանութիւնն զայն ի փառս Հելլենացոց եւ անմահ յիշատակ անձին իւրոյ:

Վարդան Արեւելոց Սաղմոսաց Մեկնութեան Ներածութիւնը (հմտ. էջմ. 1119), յօրինուած հետեւութեամբ Եպիփանու Կիւրացոց. այսպէս նաեւ էջմ. 1398, 307բ—312բ:

13. Էջ 87—88. Ս. Աթմանասի է: Շնորհք աստուածայինք, որ շնորհեցան ի սուրբ Հոգւոյն ի հին եւ ի նոր Կապարանաց...:

14. Էջ 88—90. Սրբոյն ||| բար ||| պահասացեալ: Վասն զի ամենայն զիւրք աստուածաշունչք եւ աւգտակարք յաղագս այնորիկ շարագրեալ եղեն...:

15. Էջ 91—110. Մեկնութիւն բանից Դաւթի փելիստփայի, որ ի կատարումն նորին տառի, որ վասն Սահմանացն իմաստասիրութեան. ստացեալ տեսուն Ներսիսի կաթողիկոսի Հայոց ի խնդրոյ ումնն Ստեփանոսի սիրողի իմաստասիրութեան: Ձիւղեր հոգեւորական...:

16. Էջ 110—112. Դաւթի մեծ եւ անյաղթ փելիստփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիլոհոնի իմաստասիրի եւ սահմանք եւ տրամաբանութիւնք իմաստասիրութեան: Ամենայն չար տանջելի...:

17. Էջ 112—130. Տեսուն Ներսիսի Հայոց կաթողիկոսի ստացեալ յաղագս փորձութեանցն ի խնդրոյ եղբաւր նորին Գրիգորի կաթողիկոսի Հայոց: Յայնժամ վարեցաւ Յետեւ ի Հոգւոյն յանապատ...: Եւ ընդէ՞ր ի ծննդենէ անտի մինչեւ յերեսուն ամացն լրումն...:

18. Էջ 130. Հարցումն. Ընդէ՞ր լինի կրօնաւորն անժոյժ...:

19. Էջ 131—147. Բանք առակաւորք զոր ստացեալ է Բարուխաւուն: Ձբարս իւրաքանչիւր անասնոց քննել արտասահմանել ունի

յինքեան տառս եւ զանազան կերպարանաւք նշանակէ. զոմանս գերազանցեալ վերնոյն կերպարանաւք. եւ զոմանս ստորանգեալ վերնոյն կերպարանաւք. եւ զոմանս ստորանգեալ սանդարամետականացն եւ է վասն այսոցիկ: — Սկսցուք ասել վասն Առիւծին որ թագաւոր է ամենայն զազանաց: Երեք բարք են ստեւծուն. Ա. բարքն՝ յորժամ զնա՞ կամ ճեմի հոտ հարկանի ի նմա յորսորդացն...: (վ.) է զազան ինչ նման առիւծու որ կոչի Վազր, նրբակնչիթ եւ երկայն... վասն զի զինչ միարանութիւն լուսոյ ընդ խաւարի. կամ Բրիտոսի ընդ Բելիւրա՞. կամ տաճարի Աստուծոյ ընդ մեղէ (°):

20. Էջ 147—152. Յաղագս խոստովանութեան: Տէր հրամայէ թէ անհնար է...:

21. Էջ 152—156. (Բանք վասն Պահոց). Ձի՞նչ աւգտիցիս վասն ի պահք լինելոյն. բերանն չորակեր եւ սիրտն լի սխալալութեամբ...:

22. Էջ 156—166. (Անխորազիր). Ասեն թէ Աստուած մարդակերպ արար զաշխարհս. եւ ի նոյն երկրէս առեալ մարդ գործէ...: Այլ եւ այլ հարցեր կը շօշափէ, յատկապէս երկար կը խօսուի Յակոբ նահապետի մասին:

23. Էջ 166—168. (Անխորազիր). Պարտ էր ժամանակաւ զերիցադոյնն ձեզ սկսանել, զԱրարածոցն ասեմ եւ զնոյն անյայտ լսողաց. զի մարգարէ յայտնի լսողաց...:

24. Էջ 168—178. Ի բանն որ ասէ. Ձի հուր բորբոքեցաւ ի բարձունս: Գրեալ է ուրեք ի գիրս աստուածաշունչս...: Ընդ մէջ 178/179 թղթերու թուղթ մ'ինկած, որուն հետեւութեամբ կը պակսի յաջորդ հատուածին սկզբնաւորութիւնը:

25. Էջ 179—184. (Ի բանն՝ Հայեաց ի քեզ՝ սկիզբը ինկած. այժմ կը սկսի.) Նեսոս արձակէ այնոցիկ որ ուղիղ են սրտիւք. որ թէ չիցեն արթունք եւ չիցեն կազմեալք ըստ Պաղոսի խրատուն...:

26. Էջ 184—187. Մահն Աղամայ: Ձգիրս զայս Արարածոց հաստատեաց Մովսէս. եւ ոչինչ յիշէ զմահուանն Աղամայ, այլ սակաւ թէ կեաց Աղամ Ձ եւ Լ ամ: Իսկ ի պատմութիւն Յունաց մնացորդացն գտեալ այսպէս գրեալ վասն Նախաստեղծիցն: Յետ մախանացն եւ չարին՝ ելեալ Աղամ բնակէր յանդիման զբախտին...: (վ.) Եւ անուղ ի տապանն զոսկերս Աղամայ եւ Եւաի:

Հրատարակուած հին եւ նոր նախնեաց, Ա. (Վենետ. 1896), 24—35:

27. էջ 187—192. (Անխորագիր.) (Ի)սկական էություն եւ գերարուն աստուածութիւն ամենասուրբ Երրորդութեանն...

28. էջ 192—199. (Անխորագիր.) Չոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է... Որպէս կամիցի ոք յերկրագործաց զանգաստան լի փշաւք սրբել...

29. էջ 199—206. Դարձեալ ի նոյն գրոց: Այլ եկեացէ աւր Տեառն իբրեւ զգոյ: Ամենայն բանի երկիրդիւ պարտ է լսել եւ զողութեամբ...

30. էջ 206—222. Ի մարգարէութեանն Եսայեայ: Մխիթարեցէք մխիթարեցէք զգոգովուրդ իմ, ասէ Աստուած... Ի քառահարկ շրջմունս արեգակնածագ քայլութեան ժամանակին...

31. էջ 222—224. Անխորագիր. Ոչ է պարտ քրիստոնէին կոծել եւ արտասուել...

32. էջ 224—243. Անխորագիր. Քաղաւածք ժամագրքի Մեկնութեան: Քանզի ցանկացեալ սաղմոսերգողին երանութեանց բաժանորդ լինել, խրատէ քարոզն...

33. էջ 244—247. Պատմաւք Քառասնորդաց պահոց: Յոլովք եւ զանազան են բանք պահոց. այլ զսակաւս ասացուք վասն բազմացն: Որպէս ասէ Բարսեղ թէ պահք ի զբախտին աւանդեցաւ...

34. էջ 247—251. Վասն խոստովանութեան ի Կիրակոս վարդապետէ: Պարտ է քրիստոնէին յորժամ կամիցի զնալ ի խոստովանութիւն երիս ինչ ամել զմտաւ... (Թերի. լրացնելու համար էջ 252 դատարկ ձգուած):

35. էջ 253—279. ՅԱռակաց Սողոմոնի: Ուրախ լէր երիտասարդ ի մանկութեան քում... Արդ ասեն աստուածային զիրք...

36. էջ 280—298. Կարգ եւ կանոն աղաթից, զոր խնդրեալ է հոգեկիր արանց յումեննէ միայնացելոյ արթուն եւ զուարթուն Գրիգորոյ. որ ցուցանէ նախադրութիւն բանին, թէ ոչ համարի զանձն արժանի այսպիսի իրի. վասն այն զառաքելոյն ի մէջ առեալ զնէ սկիզբն բանիս. Ասաց առաքեալն Պաղոս առաւթն ընտրութեան... (վերջը պակաս):

37. էջ 299—308. Այս են մեղք զլրաւարք, որ կոչին մահուչափ. եւ են է. ...

38. էջ 308—310. Այլուտ բան: Հարցումն, թէ զի՞նչ է քնարն տանաղի: Պատասխանի Մաքսիմոսի. Հոգի մարդոյ ունի երկուս զաւրութիւնս՝ միտք, բան...:

39. էջ 310—331. Նախադրութիւն եւ Մեկնութիւն Երկր: Այս զիրք նախամեծար եւ

պատուական համարեալ է որդւոցն Իսրայէլի...:

40. էջ 331—342. Ի մոլորութենէ կուրացեալ Հրէեցն, որք զեռ եւս սպասեն սուտ Գրիստոսին, այսինքն նեոին: Արդ նախ զլցուք զընդդիմութիւնս նոցա, որք բերեն ընդզէմ ճշմարտութեան... (վերջը թերի կ'երեւայ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. էջ 25. Չմեղուցեալ Կարապետ զրիչս յիշեա, ով սուրբ ընթերձաւ. ի սուրբ սրտէ ջերմին արտասուաւք, ի խորաց սրտէ աղաչեմ. եւ դու յիշեալ լիջիր յամենառատ պարգեւաւդէն. ամֆէն:

Հմմտ. եւ էջ 56:

2. էջ 178. Ով սուրբ ընթերցող եղբայր հոգեւոր զՅակոբ սուտանուն կրանաւոր զկազմող զրոցս աստուածային զանձուց յիշեալ ի Տէր. եւ Աստուած զքեզ յիշէ յիւր միւսանգամ դալուտան. ամֆէն: Կազմեցաւ զիրքս ի թվ. Հայոց ՊԽԵ (1396):

3. Սկիզբը զբուած պահպանակ թղթին վրայ. Anno Domini 1696, die 20 Fe. Ex Libris Spectabili(s) Stephani Alchinowicz Consuli(s) Zam.

Հմմտ. Macler: REA 7 (1927), 131—134:

18.

Ժ Ո Ղ Ո Վ Ա Յ Ո Յ

Cod. arm. 63. — Ռ.Լ.Գ. = 1584 (°):

ԹՈՒՂԹՔ՝ 298: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 16,5 X 10 հմ.: — ՆԻԻԹ՝ անդրի բուրք: — ԳԻՐ՝ նոսր: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. քերքերն առանց կազմի ժամանակ կտրուելու: — ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ էջ 91—96, 309 A, 355—358, 362, 385—386: — ՏԵՂԻ՝ կափա: — ԳՐԻԶ՝ Յովհաննէս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1584°:

Մատենան է՝ Հաւաքածոյ զանազան կարեւոր եւ անկարեւոր զբուածներու, զանազան ժամանակէ եւ զանազան ձեռքերէ, որոնք ապա առնթերագրուած եւ կազմուած են: Այս է բովանդակութիւնը.

1. էջ 1—38 եւ էջ 595—596. Դաշանց թուղթ սկիզբը պակաս:

2. էջ 38—85. Վասն հարսանեաց բան: Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին: Ասէ իմաստասէրն Արիստոտէլ... (հարցմամբ եւ պատասխանով. նոյն ոճով այլ հատուածներ Աւետարանի շուրջը):

3. էջ 97—118. Թուղթ յաղագս միաբանութեան եկեղեցւոյ Յունաց եւ Հռոմայեցւոց. եթէ ո՞րպէս եւ յո՞ր սակս ընկալաւ եկե-

ղեցին Հռոմոց զժուրն ի խորհուրդ սուրբ արեանն Գրիստոս...: Ի ժամանակս բարեպաշտ թաղաւորին Յունաց, որում անունն կոչիւր Պալալաւ, որ կամեցաւ առնել խաղաղութիւն...:

4. էջ 118. Վասն երակ առնելոյ մարդուն: — էջ 119. Գիր զողի:

5. էջ 121. Հարցմունք խիստ զեղեցիկ եւ պիտանացուք: Զի՞նչ է թէ աւրհնեալ է փայտն որով լինի արդարութիւն...: էջ 147. Վասն Մուղրոյն: Այսմ վկայ պատմեմ ձեզ... (Քաղուածքներ Վարդանայ ժղլանքէն):

6. էջ 151—171. Յաղագս հիմնարկել եկեղեցոյ: Զհիմունս եկեղեցւոյ եպիսկոպոսն միայն իշխեացէ ծրագրել...: Կից՝ զանազան մանունք այլ եւ այլ զրիչներէ:

7. էջ 172—198. Գրաւաջք: էջ 200—208 զանազան մանունք:

8. էջ 209—227. Տեառն Ներսիսի Տարսնեցւոյ զեսպանազնացութիւնն:

9. էջ 228. Գրիգորի վկայասիրի վասն զատկին բանք (քաղուածաբար):

10. էջ 231—236. (Վասն խորանայ Աւետարանին). Առաջին խորանն չորս զեղաւքն՝ կապուտակ...:

11. էջ 237, 286—288. Անուանք քաղաքաց. Վաղարշապատ էջմիածինն է...:

12. էջ 238—263. Այս են ամենայն տնարինականքն Տեառն մերոյ (յերուսաղէմ): Նախ եւ առաջին քաղաքն Նազաթէթ...:

13. էջ 266—283. (Գիրք) Առակաց: Առիւծն հիւանդացաւ եւ զրկեց բժշկաց խընդիր...:

14. էջ 289. Հաւատով խոստովանիմ:

15. էջ 296. (Տաղ). Աստուածը աստուծոց մեղուցեալ եմ քեզ, խաբանօք բանասարկուին խորտակեցայ ես... (Ա—Կ տունք):

16. էջ 299—308. (Յակոբայ Թոխաթեցւոյ Ողբ ի վերայ Օլախաց երկրին). Լալով ասեմ ողբերգական, արտասուելով հառաչական... Ողբս այս օրինակի վրայէն հրատարակած եմ՝ Հանդէս Ամսօրեայ, 1932, էջ 343—348 = Ակինեան, Մատենադրական հետազոտութիւններ, Դ., էջ 13—21:

17. էջ 309—358. Առանձին տետրակ մը, բոլորգիր, որ կազմին մէջ առնուած է: Առաջին էջին կէսը դատարկ, անուշտ յաջորդ ճառին կամ քարոզին խորագիրն եւ սկզբնաւորութիւնը կարմրագիր գրելու համար: Այժմ կը սկսի այսպէս. (Սուրբ Երրորդ) «ղութիւն, անեղ էություն, համագոյ բնութիւն, անիմա-

նալի գոյութիւն...» (վերջաւորութիւնն է) «այլ վաղվազակի հրամայեցեր ծառայցին. Ածէք զեզն պարարեալ, զենէք կերայք եւ ուրախ || »:

18. էջ 359—361. Շարակնոցէ քաղուածք:

19. էջ 362—484. Աղօթք որ նախ քան գոյատարազն մատուցանի: Ամենապալ, բարերար, մարգասէր...: Կից՝ քաղուածքներ յԱղօթից Գր. Նարեկացւոյ:

20. էջ 487—511. Երազահանն, զոր մեկնեաց Դանիէլ մարգարէ, որժամ ետես Նաբոթն եւ ոչ ոք կարաց մեկնել նմա, բայց Դանիէլ. եւ զայս ամենայն զրեաց ի զիրս: Աստուած ի տան քում տեսեալ. (Մեկնութիւն). Տուն նորոքի... (Ա—Ք):

21. էջ 512—543. Երազահան յայտնէ ամենայն ցեղ:

22. էջ 544—550. Անպէտ մանունք:

23. էջ 551—596. Քաղուածքներ Գր. Տաթեւացւոյ Քարոզներէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

1. էջ 284—285 կ'ըսուի. «Ի թվ. Ռին եւ ԼԳ աւելորդին եւ աղուհացիցն, եկին անաւրէն թաթարնին եւ շրջապատեցին բոլոր Կաֆային. շատ նեղութիւն քաշեցին որ կային մէջ քաղաքին: Եւ Գրիստոսի ծառայքն որ սուրբ եկեղեցիքն որ կաին եւ հալածեցին զթաթարնին եւ կորու (sic) առին եւ զնացին... Ես անպիտան Յովանէս հարեղաս Երուսաղէմ էի անժամ յոր այս բաներս եղել է ի Քաֆաս. եի եկա լսեցի տեսա հա(յ)րս զարկելին թվաքով... վաղջանեցաւ խնակաց պահոցն Ե. թվ. Ռ.Լ.Գ. նոննմբերի ժ.թ...:

2. էջ 323. Ի լուսանցս. «Ի գրոց ժամի Չամօցեայ չէն զաղաքին»:

Հմմտ. Macler: REA 7 (1927), 154—155:

19.

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր Ք

Cod. arm. 66. — Ռ.Ծ. = 1601:

ԹՈՒՂԹՔ՝ 297: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 24,5 X 18 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրք: — ԳԻՐ՝ բուրգիր: — ԳՐՁՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ կաշի. վրան խորաբանակ՝ Յիսուս խաչին վրայ, երկու կողմերը Մարիամ եւ Յովհաննէս, արձանագրութեամբս Christus factus est pro nobis obediens vsque ad mortem avtem crucis ph. 2. սուր վրայ canon: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ \*9բ—12բ: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ 1ա: Ունի յաղկագրեր, Լուսանցապարզեր: — ԵՌԱՅԻՍՏՈՒՆ՝ կարմրագիր: — ՏԵՂԻ՝ իրով: — ԳՐԻԶ՝ Զախնօ Սիւսնոն: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1600—1602:

Մատենան 5՝ Կանոնագիրք. հետեւեալ բովանդակութեամբ.

1. Թղ. \* 1ա—9ա. Նիւթերու ցանկ. կը սկսի. «2ի ընդ արեւելս պարտ է երկիր պահանել... (Սկիզբի \* 1—12 թղթերը Ձեռագրին թուահամարման մէջ չեն առնուած):

2. 1ա. Շարադրութիւն Կանոնաց եղեալ եւ այս կարգ եւ չափ գլխոցն: Ա. Կանոնք առաքելական, գլուխս ԺԶ. ... Ընդ ամէնը Ա—Ծ է գլուխը Կանոնաց. ասոնք են.

Ա. Թղ. 2ա. Սահմանք եւ Կանոնք զոր եղին աշակերտք եկեղեցո սրբոյ յետ վերանալոյ Տեառն: Վարդապետութիւն առաքելոցն...:

Բ. Թղ. 16ա. Երկրորդ առաքելական կանոնիս. գլուխս ԶԵ:

Գ. Թղ. 25ա. Կանոնք յետ առաքելոց հարանց հետեւողաց. գլուխս ԻԷ:

Դ. Թղ. 29ա. Դնի Դ Կանոն Նիկէական. գլուխս Ի: — Թղ. 35ա. (Անուանք հարցն որք զտան ի Ժողովին):

Ե. Թղ. 37բ. Անկիրար Կանոնիս. գլուխս Ի:

Զ. Թղ. 42բ. Կեսարիա Կանոնիս. գլ. Ժ:

Է. Թղ. 45ա. Նիոյ Կեսարիա Կանոնիս. գլ. Ի:

Ը. Թղ. 48բ. Կանոնք Գանգրեայ. գլ. ԻԳ:

Թ. Թղ. 52ա. Անտիոքա Կանոնիս. գլ. ԻԵ:

Ժ. Թղ. 58ա. Ղաւոքդի(կ)եայ Կանոնիս. գլ. ԾԵ:

ԺԱ. Թղ. 63ա. Ս. Գրեգորի Կանոնիս. գլ. Լ:

ԺԲ. Թղ. 65ա. Սարգիսեա Կանոնիս. գլ. ԻԱ:

ԺԳ. Թղ. 72ա. Կոստանտինուպոլսի Ժողովոյն եւ Կանոնին. գլ. երեք:

ԺԴ. Թղ. 73ա. Կանոն Ժողովոյն որ յեփեսոս. գլ. Զ:

ԺԵ. Թղ. 74բ. Կանոնք Աթանասի. գլ. ԶԼ:

ԺԶ. Թղ. 88բ. Կանոնք Բարսղի առ Ակիլիքոս. գլ. ԾԱ:

ԺԷ. Թղ. 100բ. Կանոնք Ս. Սահակայ Հայոց հայրապետի ասացեալ. գլ. ԾԵ:

ԺԸ. Թղ. 124ա. Հայկոց (Շահապետի վանի Ժողովոյն) Կանոնին. գլ. Ի:

ԺԹ. Թղ. 141բ. Թուխտ Սեւանտեա եպիսկոպոսին արհի եւ մեծապատուոյ (գլ. ԺԴ):

Ի. Թղ. 146ա. Կանոնք Ներսիսի Հայոց կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնեանի եպիսկոպոսի (գլ. ԼԷ):

ԻԱ. Թղ. 153ա. Յովհաննու Մանդակունայ Հայոց կաթողիկոսի (գլ. Ժ):

ԻԲ. Թղ. 157ա. Աբրահամու Մամիկոնից եպիսկոպոսի առ Վաչագան Աղուանից յարքայ:

ԻԳ. Թղ. 159բ. Կանոնք վերջնոյ Սահակայ կաթողիկոսի:

ԻԴ. Թղ. 162բ. Կանոնք տեառն Յովանէսին իմաստասիրի, Հայոց կաթողիկոսի. գլ. ԼԲ:

ԻԵ. Թղ. 172բ. Կանոնք Սիւրբի Հայոց կաթողիկոսի. գլ. ԻԲ:

ԻԶ. Թղ. 179բ. Սահմանք կանոնականք սուրբ առաքելոյն Թաթէոսի ի քաղաքին Ուոհայի լուսաւորել զնոսա:

ԻԷ. Թղ. 187ա. Կանոնք տեառն Փիղիպոսի յառաքելոյն:

ԻԸ. Թղ. 189ա. Կանոնք Բ. Անտիոքայ:

ԻԹ. Թղ. 192բ. Կանոնք տեառն Եփրեմի արղիւնակատար կրօնաւորի զոր սնուցանէր անապատն. Կուսութեան ճառէն:

Լ. Թղ. 194ա. Կանոնք Կիւրղի Աղէկասնադրացոյ. գլ. Ե:

ԼԱ. Թղ. 195ա. Կանոնագիր տեառն Եփիւպանու ասացեալ. գլ. Ե:

ԼԲ. Թղ. 195բ. Եղիշայի. գլ. Ա:

ԼԳ. Թղ. 196ա. Խոստովանութիւն Ժողովոյն Անտիոքայ:

ԼԴ. Թղ. 199ա. Կանոնք Բ. Նիկիականք ... կարճ ի կարճոյ. գլ. ՃԺԴ:

ԼԵ. Թղ. 206բ. Սահմանադրութիւն Կանոնի Վաչագանա յԱղուանից արքայի եղեալ ի Ժողովն որ Աղուանս եղեւ. գլ. ԻԱ:

ԼԶ. Թղ. 210ա. Բա(ր)սղի գիր կանոնական վասն պէսպէս փիւրապատիկ խտից. գլ. ՄՂԲ:

ԼԷ. Թղ. 243ա. Սահմանք կանոնադրութեան երանելոյն Գրեգորի Աստուածաբանի Նաղիանձու եպիսկոպոսի յաղագս ուղղափառութեան հաւատոյ եւ ասպաշխարութիւն յանցաւորաց. գլ. Լ:

ԼԸ. Թղ. 249բ. Կանոնք Դ(վ)նի սուրբ Ժողովն, զոր յամի... գլ. ԺԲ:

ԼԹ. Թղ. 255բ. Երանելոյն Մակարա սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթ ի Հայս վասն կանոնադրութեան կաթողիկէ յեկեղեցոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման եւ ընդ հրաման անցանել: (Սկ.) Ահա վասն ասի...:

Խ. Թղ. 261բ. Ս. Սահակայ Հայոց կաթողիկոսի գիր աւանդութեան... գլ. Ա:

ԽԱ. Թղ. 265ա. Յովհաննու Մանդակունայ կաթողիկոսի եւ Թարգմանչի, աշակերտ եղելոյ Ս. Սահակայ մեծի հայրապետի Հայոց կաթողիկոսի բան կանոնական. գլ. Ա: — Թղ. 266ա. Նորին: Իսկ որ զուրբաթ...:

ԽԲ. Թղ. 267ա. Կանոնք սուրբ Ժողովոյն որ Ժողովեցան ի Թէոդոսիպոլսի որ յաժմ կոչի Կարնոյ քաղաք:

ԽԳ. Թղ. 273ա. Սահմանք եւ կանոնք կարգի յեկեղեցոյ սրբոյ հայրապետին Նէրսէսի Հայոց. գլ. ԽԳ:

ԽԴ. Թղ. 275ա. Կանոնք Ս. Յովհաննու Մանդակունայ կաթողիկոսի երկրորդ. գլ. Է:

ԽԵ. Թղ. 276ա. Ս. Դիոնիսիոսի Աթենացոյ եպիսկոպոսի:

ԽԶ.<sup>1</sup> Թղ. 276բ. Կանոնք Էր. Եպիփանու... գլ. Գ:

ԽԶ.<sup>2</sup> Թղ. 280բ. Հարցումն Թէոդոսի քահանայի... առ Էր. Եպիփան Կիւրացին. գլ. Գ:

ԽԷ. Թղ. 282ա. Յովհաննու յԵրուսաղէմացոյ եպիսկոպոսի. գլ. Ա:

ԽԸ. Թղ. 282ա. Հիպոլիտեայ սրբոյ բան ի Ծնունդն եւ ի Մկրտութիւնն Տեառն. գլ. Ա:

ԽԹ. Թղ. 282բ. Նէկատոնայ Հռովմայ եպիսկոպոսի. գլ. Ա:

Ծ. Թղ. 283ա. Մեղիտանի եպիսկոպոսի թուղտ առ Տրպիս. գլ. Ա:

ԾԱ. Թղ. 283բ. Ս. Աթանասի մեծի Ա. բան:

ԾԲ. Թղ. 283բ. Սերերիանոսի ի Ղուկայ Աւետարանին Մեկնութենէ:

ԾԳ. Թղ. 284բ. Ի Սոկրատայ: Թղ. 285ա. Նորին նման:

ԾԴ. Թղ. 285ա. Ս. Դիոնիսիոսի Առիպագոցոյն յաղագս Աստուածածնին:

ԾԵ. Թղ. 285բ. Մանուէղի:

ԾԶ. Թղ. 285բ. Կղեմայ Հռովմայ եպիսկոպոսի:

ԾԷ. Թղ. 286ա. Կոչումն ասպաշխարութեան զոր ասացեալ է տեառն Յովհաննու Մանդակունայ Հայոց կաթողիկոսի. տունք ձեռն: — Թղ. 287բ—288բ. Խոստովանութիւն քահանայի: Թէ կաշառ վասն մեղաց առ եւ թող...:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Էջ 289ա—290բ. 289ա. (Թանձր բոլորգիր). Փառք... Արդ զրեցաւ քրիստոսահիմն եւ առաքելադարձ հոգիաբուխ տառս կանոնական. ի մայրաքաղաքն Իլով ընդ հովանեալ սուրբ Աստուածածնին, ձեռամբ Զահնո՛ Սգին (= սար-

կաւագին). ի Թուականիս հայկազանունի ՌԾԱ ամի. ի Ժամանակս հայրապետութեանն Հայոց երկր երանեալ եւ առաքելաշնորհ տեառն տէր Դաւիթ կաթողիկոսին: Եւ թագաւորութեանն Իլիսայ Զիկմունդի երրորդի. եւ զօրագլուխ թագաւորութեանն Իլիսայ քաջ սպարապետին եւ աստուածասէր զաւրափաբին Պարոն Յովհաննէսին որ ըստ իւրեանց լեզուի կոչի Բան Եան: Եւ զատուորութեանն Պարոն Էսան պէյին սորին իսկ ստացողի. որ մեծաւ ջանիւ եւ թեւակոխութեամբ ի ինդիր ելեալ աստուածապատուէր եւ զէտադատ կոտակիս նախանձայոյդ եղեալ հայրենի յիշատակացն եզիտ զգաղափար սորա առ քահանայ մի Խաչատուր կոչեցելոյ եւ ծանեալ որ իւրոց նախնեացն էր եւ կամեցաւ աւնուլ ի ձեռանէ նորա եւ տալ յիշատակ ի նորաչէն քաղաքն Զամօսցա՛ ի յեկեղեցին սուրբ Աստուածածնին: Բայց տէր Խաչատուրն յոյժ զրասէր էր եւ առաւել եւս հին օրինակաց վասն այն շատ աղաչեցեալ զպարոն Էսանպէյ զատուորն եւ ետ զրել զսա՛ փոխան նորա. եւ ետ պարոն Էսանպէյին. վասն զի օրինակն սորա յոյժ ընտիր էր եւ անաղալ. զի էր երկաթագիր եւ յիլցի զրեալ: Եւ առեալ ընկալաւ զսա՛ պարոն Էսանպէյն ի ձեռանէ տէր Խաչատուրին. եւ եղ յիշատակ անջինջ վասն հոգւոյ իւրոյ եւ վասն ծնաւոյց իւրոց պարոն Խաչերեսին եւ Մելիք խաթունին. եւ զուզակցին իւրոց բանի Օլուխային որ է Հեղինէ եւ եղբօրն իւրոյ Պարոն Ստեփանոսին որ յայսմ (ամի) փոխեցաւ առ Աստուած կսկծալի մահուամբ. մի վասն մէջ մեղաց լինելոյն ի յերիտասարդութեան հասակի. եւ երկրորդ զի ըստ օրինի նախազուգինն նոր զուգակցեալ էր ամուսնութեամբ: Եւ քերցն իւրոց Կուրաֆ խաթունին եւ Յաղուր խաթունին. եւ միամօր նորահաս օրիորդ զստերն իւրոյ բաննա Միլուչային. եւ ամենայն արեան մերձաւորաց իւրոց: Ի նորաչէն քաղաքն Զամօսցա ի յեկեղեցին Փոխման սուրբ Աստուածածնին. զի եղիցի սա յիշատակ յաւիտեան անկորուստ զանձ, անկորոպուտ ստացուած եւ սին եկեղեցւոյ. զի սա է իւրատող քահանայից եւ պատուիրող քահանայապետից, զատող սարկաւազաց եւ յանդիմանող Ժողովրդոց, արտաքսող պոռնիկաց եւ նղովող հերձուածողաց:

Արդ երես անկեալ աղաչեմ զձեզ, ով ընթերցող եղբայրք, որք հանդիպիք սմա կարգալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յարգութեան ձեր զստացող սորին զպարոն

Էսանայէն եւ զծնողսն իւր եւ զամենայն ա-  
րեան մերձաւորսն եւ զգծող սորին զՁախնո՛  
զպիւրն. եւ զիս զանսիրտան Յակոբ էրէցս որ  
զիշատակարանս գրեցի. մանաւանդ առաջի  
ղենման սուրբ պատարագին հաշտարար գա-  
ռինն Աստուծոյ: Եւ ոք յիշեն սրտի մտօք  
միայն հարիւրապատիկ վարձս առցէ ի Քրիս-  
տոսէ յաւուրն ահեղին. եւ առատապարգեւն  
ամենայնի ողորմեացի առ հասարակ ամենե-  
ցուն ձեզ՝ յիշողացդ եւ յիշեցելոցս. եւ նմա  
փառք յաւիտեանս. ամէն:

Թղ. 290 կայ հետեւեալ ոտանաւորը նոյն  
Յակոբ Թոխաթեցոյ հեղինակութեամբ.

- Բանքս գրեցաւ կանոնական.
- որպէս որ Տեան է պատուիրան.
- Իբր զկտակն Մովսիսեան,
- ըստ Աստուծոյ դատիւ մարդկան:
- Մովսէս գրեաց Կտակարան.
- Ժողովրդոցն Իսրայէլեան.
- Որ ոչ պահօղքն քարկոծեցան.
- քանզի չէին ուղղադաւան:
- Յետ Մովսէսի բազումք յարեան.
- որ յԱստուծոյ առին հրաման.
- Բայց ազգն չար հըրէական,
- ըզբան նոցա ոչ ընկալան:
- Ապա որդի բանն էական,
- եկեալ մարմին առ կուսական.
- Եւ ետուր մեզ նոր պատուիրան,
- քաղցր լծոյ թեթեւ բեռան:
- Յետ այնորիկ առաքեցան,
- սուրբ առաքեալքն երկոտասան.
- Քառակուսի վիճակեցան.
- ի չորս անկիւնս տարածեցան:
- Որպէս առեալ էին հրաման.
- զնեւ կանոնք եւ պատուիրան.
- Յեկեղեցիս ուղղադաւան.
- պահել հաստատ եւ անսասան:
- Աւետարանն քրիստոսեան.
- նա արդարոց է բաւական.
- Այլ սա եղաւ վասն նոցայն,
- որք ի չօղաց (չաւղաց) խտտրեցան:
- Սա արդարոցն է զովական
- մեղաւորացն է քաւարան.
- Անյուսից յայս է փրկութեան.
- ցեղասեռից միանդամայն:
- Սա զարդուցիչ ոգոց մարդկան.
- թմրեալ մեղօք նսեմական.
- Արթուն հոգոց լոյս պարզական.
- խառնէ ի դասս անմարմնական:

Սա է շաւիղ արքայութեան.  
զի Քրիստոսէ հիմնարկեցան.  
Յաւաքեղոցն հաստատեցան.  
եւ ըստունեաց զարգարեցան:  
Ձի որք արբեալ են թմրական.  
ըմպողք զինոյն յիմարական.  
Սովաւ զարթնուն եւ զգաստանան.  
թէ վերձանեն մտառական:  
Որք Աստուծոյ տեսուն բաղձան,  
եւ անաղօյտ լուսոյն ցանկան,  
Սովին բանիւրն մարթանան,  
մերձիլ ի տիպն անտեսական:  
Սա խրատիչ է աշխարհի.  
բանականաց հանուրց սեռի.  
Կարգաւորաց եւ իշխանի,  
միահամուռ մեծ եւ փոքրի:  
Ձձեզ աղաչեմ եղբայրք բարի.  
որք հանգիպիք այսմ տառի.  
Ձոգի սորին ստացողի.  
յաղօթս յիշէք անձանձրալի:  
Նա եւ իմոյս անարժանի.  
որ սակաւ գիրքս գրեցի.  
Յիշման արէք զիս արժանի.  
արտասուելոյն ժամանակի:  
Ով որ յիշել չձանձրացի.  
դէմ սուրբ գառինն որ զենանի.  
Ի Քրիստոսէ յիշեալ լիցի.  
այժմ եւ յաւէտ ապագայի: Ամէն:

Յայսմ ամի կամարեցաւ բարաւոր զբանց  
պարսպի քաղաքիս. զոր կատարիչն հասու-  
ցանէ յաւ(ր)տն. ամէն:

Թղ. 260ա (ի լուս.) Այս ողորմած տէր  
ողորմեաց ինձ մեղաւորիս: Ի Ո Ի. Ս Մ Ն Ս  
(= Սիմոնիս):


Թղ. 287ա—բ (ի լուս.) Ո՞հ աղաչեմ  
յիշել ի տէր զանարժան զծողս Սիմ ( = Սի-  
մէոն): ԹՎ. ՌՆԹ կատարեցաւ, Օղոստո՛:  
Իբն. ուրբաթ օր:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ: Յիշատակարանիս  
զրին է Յակոբ Թոխաթեցի ի Ձամոսցա,  
որուն հաղորդած տեղեկութիւններու համա-  
ձայն Կանոնադրքիս զազափարօրինակն եղած  
է «յոթ ընտիր եւ անողալ, զի էր երկաթա-  
զիր եւ իրկցի գրեալ»: «Խլկցի» հոս կիրար-  
կուած է հաւանօրէն «Կիրիկիոյ շրջանին  
զբուած» իմաստով եւ չունի որ եւ է կապ ոչ  
Գէորգ Խուլի եւ ոչ ալ «Խլկցի» Շարակնոց-  
ներու հետ:

Այս «Երկաթագիր» գաղափարօրինակը  
1602ին ձեռք բերած էր Խաչատուր քահանայ,

որ կը դովուր իբրեւ «գրասէր» կամ զբամոլ  
«եւ առաւել եւս հին օրինակաց» հետամուտ:  
Այս «գրասէր» Խաչատուր քահանայի անձը  
այլուստ անձանօթ է ինձ. հաւանօրէն Լեհա-  
հայ գաղութին չէր պատկաներ: Կանայէյ  
վեր կը հանէ, թէ այն ձեռագիրը «իւրոց  
նախնեացն էր». այսինքն ստացուածքն էր եր-  
բեմն իւր տոհմին. ուստի Լվով բերուած

բազմութիւնը տուած եմ այլուր (Թուղթ  
Մակարայ Բ: Երուսաղէմի հայրապետի առ  
Վրթանէս եպիսկոպոս Սիւնեաց Յաղագս Կար-  
պաց եկեղեցոյ. Վիեննա 1930, էջ 93—103):  
Իովանդակութիւնը նոյն է: Նաեւ գրչութիւնը  
«Երկաթագիր» է, գրուած 1098ին Արմէնի լե-  
ռան Յովանավանքին մէջ, Յովհաննէս գրչէն:  
Ձեռագրին տեղափոխութիւնը Լվովէն Նոր-



ԻՍԿԱԳԻՐ ՍԻՄԵՈՆ ԳՊՐԻ (Թ. 20)

է Ղրիմի կողմերէն: Այս մասին կար անշուշտ  
ձեռագրին մէջ Յիշատակագրութիւն մը:

Ձեռագիրս կ'արտագրուի Սիմէոն Ձախ-  
նոյ սարկաւազի ձեռքով. ինչպէս բնական է  
ենթագրել, օրինակութիւնը կատարուած է  
հաւատարմութեամբ, բայց թէ ո՞րքան ճշգու-  
թեամբ, այս կը կարօտի քննութեան: Ի՞նչ  
եղաւ այնուհետեւ այս երկաթագիր ձեռա-  
գրին բախտը:

Ինձ կը թուի, թէ սոյն այս ձեռագիրն է  
Նոր-Ձուղայի Ամենափրկիչ վանքի Մատենա-  
գարանի Թ. 131 Կանոնագիրքը, որուն նկա-

Ձուղայ տեղի ունեցած պէտք է ըլլայ 1630ին  
ի ձեռն Խաչատուր Կեսարացոյ, որ Ամենա-  
փրկիչ վանքին առաջնորդն էր:

Ուրիշ տեղ առիթ պիտի ունենամ ան-  
գրադառնալու այս Ձեռագրին:  
Հմտ. Macler: REA 7 (1927), 115—124:

20.

ՍԻՄԵՈՆ ԳՊՐԻ ԼԵՀԱՅԻՈՅ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ  
Cod. arm. 58. — ՌՁԳ = 1635:

ԹՈՒՂԹԻՒՆ 198 (396 էջ): — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝  
15.3 × 10 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ.: — ԳԻՐ՝ նոսր-  
շղակիւր: — ԿԱԶՄ՝ կաշի բաց կարմիր գոյնով: —

ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԱՏԱՐԿ ԹՈՒՂԹԻՆ՝ էջ 206, 289 (Կէսէն) — 396. Երկու դատարկ բուրբ նաւ գրքին սկիզբն եւ վերջը իբրեւ պակասակ: — ԽՈՐԱՆ, ԶԱՐ- ԳԱԳԻՐ ԵՒՆ չկայ: Գրուած է միակեան, առանց գլխա- կարգութեան եւն: Հատուածներու սկզբնատարտք ան- գիր բողոքած, հաւանորէն ապա կարմրագիր գրելու համար: — ՏԵՂԻ՝ հաւանորէն լվով: — ԳՐԻԶ՝ Մի- մէնոս դպիր Զամոսցացի՝ հեղինակն գործոյս: — ԺԱ- ՄԱՆԱԿ՝ 1619—1635:

Մատենան է՝ Սիմէոն դպրի Լեհացոյ (Չամոսցացոյ) Ուղեգրութիւնն եւ Տարե- գրութիւնը, առանց խորագրի: Կը սկսի այս- պէս.

Էջ 1. «Ես մեղաւորս եւ անարժան, բիւր ջանքարոյ պարտական... Սիմէոն անուն, որ- զի Մարտիրոսի...: Եւ կ'աւարտի (էջ 395) այսպէս. «Իսկ ի թվին Ռէշէ, սեպտեմբեր ամ- սոյ: Եկն ի Լէհ էջմիածնայ Մեղքիսէթ կա- թողիկոսն... եւ կացին ի Լով կէս տարի».

Սիմէոն դպիր, որդի Մարտիրոսի, 1608, փետրուար 15ին մեկնելով Լվովէն, նոյն տարւոյն կը հասնի Կ. Պոլիս. հոս կը մնայ երկար, սպասելով առթի, Երուսաղէմ ուխտի երթալու: 1610ին Մկրտիչ Վ. Խարբերդցոյ ընկերանալով կ'ուղեւորի Զմիւռնիա եւ չըջա- վայելով ծովեզերեայ քաղաքները կը վերա- դառնայ Կ. Պոլիս: 1611ին Զաքարիա Վ. Վա- նեցոյ հետ կը մեկնի Վենետիկ—Հոռոմ: Հոն երկար դադար կ'առնէ: Ասկէ Վենետիկ— Զմիւռնիա—Պրուսա—Խարբերդ դժով կը հասնի Մուշ: Վերադառնալով Կ. Պոլիս՝ կը նաւէ Աղեքսանդրիա եւ Գահիրէի ճանապարհ- հով կը ժամանէ Երուսաղէմ: Ժամանակ մը կը մնայ հոն: Հալէպ—Կեսարիա—Անկիւրիա ճանապարհով կը վերադառնայ Կ. Պոլիս, ասկէ ալ Լվով, 1619ին:

Ճանապարհին տեսածներն ու լրատուները գրի առած է Սիմէոն: Ընդարձակ նկարա- գրած է Կ. Պոլիս, Վենետիկ, Հոռոմ, Մուշ, Գահիրէ, Երուսաղէմ, Հալէպ, Ամիթ (Տի- գրանակերտ) եւ Լվով քաղաքները: Իր Ուղե- գրութեան կցած է Սիմէոն 1619—1635 տա- րիներու Տարեգրութիւնը:

Սիմէոնի այս Ուղեգրութիւնն եւ Տարե- գրութիւնը լոյս տեսաւ առաջին անգամ Հան- դէս Ա. մ. ս. օ. բ. ա. յ. ի մէջ 1932—1934 տա- րիներուն, եւ ապա առանձին հատորով. Սի-

մէոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն, Տարե- գրութիւնն եւ Յիշատակարանը: Ուսումնա- սիրեց եւ հրատարակեց Հ. Ն. Ակիմեան, Վիեննա 1936, էջ 1—384:

Հմտ. Macler: REA 7 (1927), 126—127:

21.

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

Cod. arm. 50. — ԺԷ. դար:

ԹՈՒՂԹ՝ 102: — ՄԵՏՈՒԹԻՆ՝ 19,7×15,7 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԳՐԶՈՒԹԻՆ՝ երկսիւն: — ԳԻՐ՝ նոտր-շղագիր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ՏԵՂԻ՝ Լե- հաստան անշուշտ: — ԳՐԻԶ՝ անճամօք: — ԺԱՄԱ- ՆԱԿ՝ ԺԷ. դար:

Մատենան է՝ Բառագիրք, հետեւեալ բո- վանդակութեամբ.

- 1. էջ 1—31. (Բառք Երբայեցոյ) . Աղամ. երկիր կամ կոյս կամ երկիր մարմնացեալ կամ երկիր կարմիր կամ յերկրէ...:
  - 2. էջ 31—135. Այս բառք են քերթողա- կան...: Աստուածազան, աստուածաղարդ...:
  - 3. էջ 135—141. Մեկնութիւն բառից քե- րականին:
  - 4. էջ 141. Թարգմանութիւն Պարսից բառից Վարդան գրոց:
  - 5. էջ 142—163. Բառք որ ինչ ի խորանն եւ այլոց անյայտից:
  - 6. էջ 164—177. Հանդէս բանաստեղ- ծաց...: Անհաս, անճառ...:
  - 7. էջ 178—203. Սահմանք իմաստասի- րականք: Աստուած վսեմական...:
- Յիշատակարան չունի:
- ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ. էջ 43. Լու- սանցքի վրայ, ուրիշ գրչէ. «Ի գրոց ժամի Զամոսցեայ չէն քաղաքին հողաբարձու անար- ժան Սիմէոնի ծերունոյն Սղէզքեվեանց 1720»:

Հմտ. Macler: REA 7 (1927), 148:

22.

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք Հ Ա Յ Ե Ր Ե Ն - Թ Ա Թ Ա Ր Ե Ր Ե Ն

Cod. arm. 51. — Ռէշէ = 1628:

ԹՈՒՂԹ՝ 179: — ՄԵՏՈՒԹԻՆ՝ 19,5×15,3 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԳՐԶՈՒԹԻՆ՝ միասիւն: — ԳԻՐ՝ նոտր: — ԿԱԶՄ՝ մագաղաբապատ (մասն լատի- ներէն ձեռագրի մը): — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, տեղ տեղ անջատուած են բարբերը: — ԳԱՏԱՐԿ՝ էջ 2—16: — ԶԱՐԳԱԳԻՐ ԵՒՆ՝ չունի: — ՏԵՂԻ՝ անճամօք: — ԳՐԻԶ՝ Մկրտիչ որդի Ղազարի: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1628:

Մատենան է՝ Հայերէնէ-թաթարերէն Բա- ռագիրք. կը բովանդակէ՝

- 1. էջ 1. Հայերէն առակաձեւ խօսքեր քա- ղուած Ս. Գրքէն, առընթեր անոնց լատինե- րէն թարգմանութիւնը:
  - 2. էջ 17—20. Ս. Գրքի ինչ ինչ դժուա- րիմաց բառերու մեկնութիւնն Հայերէն, լա- տիներէն եւ լեհերէն:
  - 3. էջ 21—354. Բառք Երբայեցոյ եւն (տե՛ս Թ. 21) թարգմանուած թաթարերէնի. այսպէս.
- Ա՛. խորխուտան քիմաս խչխրաս:
- Արանա՛. աղանընկ ալըլի:
- Արբա՛. աղալարնընկ աթասը. սարդիս- տա:
- Արբան. պիլիքլիք. Եղեկ. Ի: ...
- Կ'աւարտի այսպէս՝
- Քուրք. խըլըզ դօվուշեա սօքունչ:
- Քուրքուրի. պաշխա պաշխա:
- Քուր. էրուչի սաղըզ քուրայ:
- Քուէից.
- Քուիոր. ուչու:
- Բառագրքիս թաթարերէն թարգմանու- թեան առաջին փորձն է, հաւանորէն սկզբնա- գիրք. տեղ տեղ սողեր դատարկ ձգուած՝ թերեւս յաւելուածներու համար: Կան եր- կրորդ գրչէ ալ աւելցուած բառեր՝ լեհերէն բացատրութեամբ:
4. էջ 357—360. Անունք քաղաքաց (Հայերէն): Աւետեաց երկիրն՝ Երուսաղէմ է...:
- ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. էջ 356. Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:
- Աւարտեցաւ ի թվ. Ռէշէ. մարտի ամ- սոյն ԺԷ: Զեռամբ մեղապարտ Մկրտչի Ղա- ղարի որդոյ: Ով եղբարք, աղաչեմ դձեղ, որ կարգայք ի վերայ սորա կամ օրինակէք ի սմանէ, յիշել կու հայցեմ ի ձեզանէ մէկ Հայր մերիւն: Եւ յիշողք յիշեալ լիցին ի միւսան- դամ դալստեանն Քրիստոսի. որ եկեալ նո- րոգեսցէ փառօք ի փառս:

Հմտ. Macler: REA 7 (1927), 147:

23.

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

Cod. arm. 62. — ԺԷ/ԺԸ. դար:

ԹՈՒՂԹ՝ 104: — ՄԵՏՈՒԹԻՆ՝ 12,5×7,5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԳԻՐ՝ նոտր: — ԳՐԶՈՒԹԻՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ սպիտակ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. էջ 200—208 դատարկ. ուր կան տեղ տեղ ուրիշ

ձեռք գրուած հաշիւներ են: — ՏԵՂԻ Եւ ԳՐԻԶ՝ ան- ճամօք: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷ/ԺԸ. դար:

Մատենան է՝ «Բառգիրք իմաստասիրա- կան բարից Հայոց եւ Լատինացոց»: Կը սկսի այսպէս. Ազահութիւն, Avaritia, Ազգաբա- նութիւն, Genealogia եւն: Վերջ՝ Օտարա- նալ, Alienari. Օրացոյց, Diarium:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ. էջ 1, ստորեւ. Joannes Alexandrowicz:

էջ 192. Hristophorus Szymonowicz.

էջ 209 (կողին վրայ). էքս լիպրիս Ան- դրէէ Բիրուսովիչ. Pirumowicz:

Հմտ. Macler: REA 7 (1927), 131:



Հ Ր Ե Ն Ը Վ Ը Ն Գ Ո Ր Գ Ե Ր Ը

ԳՐԵՅ՝ ԶՏԵՆԿՈ ՀՕՅՐԻՆՏԵՐ\*

1.

Վերջին յիսուն տարուան ընթացքին գոր- գերու պատմութեան շուրջ մատենագրու- թիւն մը գոյացած է, ուր կը հանդիպինք վէճի նիւթ եղած, խորհրդաւոր ու լուսա- բանութեան կարօտ հարցի մը. այդ՝ Հայկա- կան Գորդերու հարցն է: Այդ հարցի լուծ- ման նպաստելու բաղձանքն է, որ ծնունդ տուաւ ներկայ երկասիրութեանս:

Հին խուզարկուներ, ինչպէս Riegl, Bode, Martin, Հայկական Գորդերու հայրե- նիքը գանազան տեղեր կը փոխադրեն. այս- պէս՝ Riegl կը ընէ Կենդրոնական Ասիա, Bode՝ Ասորիք, Martin, գորդագիտութեան վարպետը, Հայաստանի Բարձրաշխարհը՝ Արեւելեան Փոքր Ասիա: Ասոր հակառակ նո- րադոյն մատենագրութիւնը՝ Կուրայի, Դեր- բենդի եւ Շամախի շուրջ՝ ուրեմն արեւելեան

\* Կը թարգմանենք հեղինակին սոյն կարեւոր գործը Հայկական գորդերու մասին, որ լոյս տեսաւ Միխայիլեան Տպարանէն: Գործիս տիտղոսն է Zdenko Hofrichter, Armenische Teppiche, Wien 1937. Druck und Verlag der Mechitharisten-Buchdruckerei. Գեր- մաներէն ընդգրկն ունի երկու փաստօր գունատիպ եւ տանուհինք միադոյն սեւ տախտակ. Հայերէն թարգմանութիւնը լոյս կը տեսնէ միադոյն տախտակ- ներով. դուրս կը թողուր ժողովրդագրական քարտէսը եւ կը յաւելուր լուսանկարը վերջին հատուածին մէջ յիշատակուած Հայկական գորդին, որ սեփականու- թիւնն է Վիեննաբանակ Պր. Գեղամ Ամատունիի: Վեր- ջին հատուածս թարգմանած ենք ազատ: